ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ապրիլի 2015 թվականի N 17 –Ա

ԳՈՒՅՔԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71- րդ հոդվածի երրորդ մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32 -րդ հոդվածի առաջին մասի 12-րդ կետով , Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 589-590-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի ապրիլի 9-ի թիվ 19-Ա որոշումը և հիմք ընդունելով Գագիկ Խաչիկի Խաչատրյանի 2015 թվականի ապրիլի 3-ի դիմումը. որոշում եմ՝

1.Համայնքային սեփականություն հանդիսացող Փարաքար գյուղում գտնվող բնակավայրի հասարակական կառուցապատման հողամասերը. 0,0875 հա մակերեսով /կադաստրային համարը 04-094-0916-006, վկայական N 02042015-04-0027, հասցեն. գյուղ Փարաքար, Ի.Գասպարյան փողոց 41/3, կադաստրային արժեքը՝ 3 958.500 դրամ/ և 0,0224 հա մակերեսով /կադաստրային համարը՝04-094-0510-0060, վկայական N 14112014-04-0061, հասցեն գյուղ Փարաքար, Ի.Գասպարյան փողոց 41/6, կադաստրային արժեքը՝1 013 376 դրամ/ փոխանակել Գագիկ Խաչիկի Խաչատրյանի սեփականությունը հանդիսացող 0,0422 քմ մակերեսով /կադաստրային համարը 04-094-0510-0058, վկայական N 27032015-04-0026, հասցեն գյուղ Փարաքար, Ի.Գասպարյան փողոց 41,կադաստրային արժեքը՝ 1 909 128 դրամ/, 0,0075 հա մակերեսով /կադաստրային համարը 04-094-05100-0063, վկայական N 02042015-04-0007, հասցեն գյուղ Փարաքար, Ի.Գասպարյան փողոց 41/9, կադաստրային արժեքը՝339 300 դրամ/, 0,0202 հա մակերեսով /կադաստրային համարը 04-094-0510-0056, վկայական N 27032015-04-0025, հասցեն գյուղ Փարաքար, Ի.Գասպարյան 41/1, բնակավայրի բնակելի կառուցապատման հող, կադաստրային արժեքը՝ 913 848 դրամ/, 0,0804 հա մակերեսով /կադաստրային համարը 04-094-0510-0061, վկայական N 27032015-04-0027, հասցեն գյուղ Փարաքար, գյուղատնտեսական նշանակության, կորիզավոր, Մերձ Արաքսյան գոտու 3-րդ կարգի հող, կադաստրային արժեքը՝ 330 440 դրամ/ հողատարածքների հետ:
2. Սույն որոշման առաջին կետով նախատեսված փոխանակության գործարքի արդյունքում գույքերի արժեքների տարբերությունը 1 479 156 /մեկ միլիոն չորս հարյուր յոթանասունինը հազար հարյուր հիսունվեց/ դրամ գումարը Գագիկ Խաչիկի Խաչատրյանի կողմից 10-օրյա ժամկետում ենթակա է վճարման Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի գյուղական համայնքի ֆոնդային բյուջեի եկամտային 900325191139 հաշվեհամարին:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար Մ. Քեյանին՝ օրենքով սահմանված կարգով կատարել սույն որոշման առաջին կետում նշված գույքի փոխանակության պայմանագրի կնքումը,

հանձնման-ընդունման և գույքային իրավունքների պետական գրանցման աշխատանքների կատարումը: Փոխանակության պայմանագրով նախատեսել, որ պայմանագրի կնքման և գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարվում է Գագիկ Խաչատրյանի կողմից:

4. 0.1099 ընդհանուր մակերեսով հողատարածքը օրենքով սահմանված կարգով հանել համայնքային սեփականության հողեր հաշվեկշռից և ընդգրկել ֆիզիկական անձանց հողերի հաշվեկշռում, իսկ 0.1503 ընդհանուր մակերեսով հողատարածքը՝ ֆիզիկական անձանվ հողերի հաշվեկշռից ընդգրկել համայնքային սեփականության հողերի հաշվեկշռում:

5. Սույն որոշման կատարման պատասխանատվությունը դնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար Մ. Քեյանի վրա:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2015 թ. ապրիլի 18
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ԱՊՐԻԼԻ 2015թվականի N 18-Ա

ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 16-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանի 2015 թվականի մարտի 10 -ի թիվ 48 որոշումը. որոշում եմ՝

1.Սահմանել ընտրական տեղամասային կենտրոններ՝ համաձայն հավելվածի

2. Սույն որոշման մեկական օրինակն ուղարկել լիազոր մարմնին, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնի տարածքը տրապետողին:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար Մ.Քեյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

20 15 թ. ապրիլ 14
գ.Փարաքար

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Փարաքարի
գյուղական համայնքի ղեկավարի
2015 թվականի ապրիլի 14-ի
թիվ 18 որոշման

ՑԱՆԿ

ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ

Ա. Թիվ 19/01 ընտրական տեղամաս, տեղամասային կենտրոն- Փարաքարի մանկապարտեզ հասցեն. գյուղ Փարաքար, Ի.Գասպարյան փողոց թիվ 1:

Տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետող անձ նշանակել <<Փարաքարի մանկապարտեզ>> ՀՈԱԿ տնօրեն Նելկտար Սարդարյանին:

Բ. Թիվ 19/ 02 ընտրական տեղամաս, տեղամասային կենտրոն – Փարաքարի միջնակարգ դպրոց, հասցեն. գյուղ Փարաքար, Երևանյան փողոց թիվ 37:

Տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետող անձ նշանակել <<Փարաքարի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ տնօրեն Վարազդատ Հակոբյանին:

Գ. Թիվ 19/ 03 ընտրական տեղամաս, տեղամասային կենտրոն – Թաիրովի մանկապարտեզ, հասցեն. գյուղ Թաիրով, Վ.Մամիկոնյան փողոց թիվ 8:

Տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետող անձ նշանակել <<Թաիրովի մանկապարտեզ>> ՀՈԱԿ տնօրեն Մարիամ Սարդարյանին:

Դ. Թիվ 19/ 04 ընտրական տեղամաս, տեղամասային կենտրոն – Թաիրովի միջնակարգ դպրոց, հասցեն. գյուղ Թաիրով , Չարենցի փողոց թիվ 2:

Տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետող անձ նշանակել <<Թաիրովի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ տնօրեն Մարինե Բաղումյանին:

Աշխատակազմի քարտուղար՝ Մ.Քեյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ԱՊՐԻԼԻ 2015թվականի N 19 -Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքով, ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387 –Ն որոշմամբ, նկատի ունենալով, որ կառույցն իրականացվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը՝ 1950 թվականին, հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանափակումների կազմում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, հիմք ընդունելով ժառանգության իրավունքի 2015 թվականի փետրվարի 20-ի վկայագիրը, Հարություն Պողոսյանի 2015 թվականի ապրիլի 14-ի դիմումը. որոշում եմ՝

1. Վերականգնել Արմավիրի մարզի Փարաքարի գյուղական համայնքի Փարաքար գյուղում Հարություն Վարդանի Պողոսյանի / ծնված 04.04.1961թ./, Անահիտ Օնիկի Պողոսյանի /ծնված 19.07.1963 թ../, Մանուկ Հարությունի Պողոսյանի /ծնված 29.03.1986 թ./ և Վահագն Հարությունի Պողոսյանի /ծնված 03.11.1988թ. / գույքային իրավունքները՝ ճանաչել նրանց սեփականության իրավունքը 0.117 հա տնամերձ հողամասի, տնամերձ հողամասում կառուցած 535.5 քմ քմ մակերեսով օրինական և 3.7 քմ մակերեսով ինքնակամ շինությունների նկատմամբ: Սեփականության իրավունքը ճանաչել համաձայն հողամասի հատակագծի և շինությունների բնութագրի, տրված ,,Կարեն Մաչանյան,, Ա/Ձ -ի կողմից, ըստ որակավորման թիվ 0244 վկայականի:
Վերականգնումը կատարվում է անհատույց սեփականության իրավունքով: :
2. Բնակելի տանը և հողատարածքին տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Փարաքար, Ռ.Արշակյան փողոց N 14:
3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանման կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

20 15թ. ապրիլ 18
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ԱՊՐԻԼԻ 2015թվականի N 20-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով սեփականատեր Գոհարիկ Կորյունի Թումասյանի 2015 թվականի ապրիլի 20-ի դիմումը. *որոշում եմ*

1.Արմավիրի մարզի Փարաքար համայնքում Գոհարիկ Կորյունի Թումասյանին սեփականության իրավունքով պատկանող 403.79 քմ հողամասին և 74.62 քմ շինություններին՝ համաձայն <<ԱՐՏԱՍԳՐՈՒՊ>> ՍՊԸ -ի կողմից տրամադրված անշարժ գույքի բաժանման սխեմայի տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, գյուղ Փարաքար, Կոմունայի փողոց թիվ 22:

2.Արմավիրի մարզի Փարաքար համայնքում Գոհարիկ Կորյունի Թումասյանին սեփականության իրավունքով պատկանող 176.21 քմ հողամասին և 11.58 քմ շինությանը՝ համաձայն <<ԱՐՏԱՍԳՐՈՒՊ>> ՍՊԸ -ի կողմից տրամադրված անշարժ գույքի բաժանման սխեմայի տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, գյուղ Փարաքար, Կոմունայի փողոց թիվ 22/1:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

20 15թ. ապրիլի 22
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ԱՊՐԻԼԻ 2015թվականի N 21-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով սեփականատեր Հեղինե Հայրապետի Սիմոնյանի 2015 թվականի ապրիլի 22-ի դիմումը. *որոշում եմ*

1.Արմավիրի մարզի Փարաքար համայնքում Հեղինե Հայրապետի Սիմոնյանի սեփականության իրավունքով պատկանող 04-094-064-025 կադաստրային համարով բնակելի տան և հողամասին տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիր մարզ, գյուղ Փարաքար, Կոմունայի փողոց թիվ 18/1

2. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանման կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2015 թ. մայիսի 22
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՄԱՅԻՍԻ 2015թվականի N 22-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի N 2387-Նորոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով Գագիկ Խաչատրյանի 2015 թվականի ապրիլի 30-ի դիմումը *որոշում եմ՝*

1.Արմավիրի մարզի Փարաքար համայնքում Գագիկ Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0510-0062՝ 0.0238 հա, 04-094-0916-0006՝ 0.0875 հա, 04-094-0557-0001՝ 0.0595 հա և 04-094-0510-0057՝ 0.0138 հա կադաստրային համարներով բնակավայրի հասարակական կառուցապատման հողամասերի միավորումից հետո առաջացող անշարժ գույքին տրամադրել մեկ միասնական հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, գյուղ Փարաքար, Ի.Գասպարյան փողոց թիվ 43:

2.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանման կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԿԱՐԴԱՆՅԱՆ

20 15թ. Մայիս 04
գ.Փարաքար